ԱՐԵՎՄՏԱՀԱՅ ՄԱՄՈՒԼԸ XX Դ. ԱՌԱՋԻՆ ՔԱՌՈՐԴԻՆ

ԽԱՌԱՏՅԱՆ Ա. Ա.

XX դ. առաջին քառորդի արևմտահայ մամուլի պատմությունը կարելի է բաժանել երեք փուլի. 1. դարասկզբից մինչև Առաջին աշխարհամարտ (1900-1914), 2. մամուլն Առաջին աշխարհամարտի և ցեղասպանության տարիներին (1915-1918) և 3. մամուլը զինադադարից հետո, մինչև Թուրքիայի հանրապետության հռչակումը (1918-1923): Նշված բոլոր փուլերում այդ մամուլը կրել է որակական փոփոխություններ՝ կապված ազգային կյանքի տեղաշարժերի, Օսմանյան Թուրքիայում կատարված տնտեսական ու քաղաքական զարգացումների և հայերի նկատմամբ երիտթուրքերի վարած հալածական ու այնուհետև ցեղասպան քաղաքականության հետ: Դրան համապատասխան, 1900-1908 թթ. անկախ, ոչ կուսակցական լրագրությունը ևս կրում է բովանդակային փոփոխություններ: Մամուլում թուլանում է հրապարակախոսական ուղղվածությունը, որ համիդյան ամայացնող գրաքննության, թեմատիկ լուսաբանումների կտրուկ սահմանափակումների արդյունքն էր: Լիարժեք հրապարակախոսություն չէր կարող գոյություն ունենալ առանց ազգային-քաղաքական հարցերի քննարկման, առանց արևմտահայության հարստահարությունների և իրավազուրկ կացության բացահայտումների ու թեկուզ և կիսաբերան գնահատանքի, որ և պարտադրվել էր արևմտահայ մամուլին 1880-1890-ական թթ. ի վեր: Փոխարենը, լրագրությունը տակավ առ տակավ ձեռք է բերում լրատվական ուղղություն, որ, բնականաբար, քիչ արժեք էր ներկայացնում իրողությունների վերաբերյալ հրապարակումների բնագավառում: Թերթերի էջերը լցվող պարտադրանքի պես հայտնվեցին ընթերցողին առանձնապես չհուզող հեռավոր պատերազմների, եվրոպական ու ասիական պետությունների փոխհարաբերությունների և այլնի մասին անդեմ, բայց և չափազանց առատ ու միօրինակ լուրերը: Այս և նման իրողությունները անպատիժ չէին կարող մնալ մամուլի համար, որը շնչահեղձ էր լինում մանրաթեմայնությունից՝ շրջա-նառելով ոչ կարևոր, նեղ հարցադրումների սահմաններում: Եվ դարձյալ, որոշակի սահմանափակումներով հանդերձ, առաջատար ժանր դարձած լրատվությունը առավել հասկանալի կամ հաղորդակից էր դառնում ընթերցողին, երբ տեղեկություններ էր տալիս նրան Արևմտահայաստանի հայ բնակչության կյանքի առօրեական երևույթների, նրա կենցաղի, բարոյականության ու հոգեբանության, բարքերի և այլնի մասին: Մամուլում առաջատար տեղ գրավե-ցին նաև ինքնուրույն և թարգմանական գրականությունը, դպրոցական-մանկավարժական, ազգային բարեսիրական, եկեղեցական, հասարակական և այլ ոլորտներին ու դրանց առնչվող խնդիրների լուսաբանումները: Հատկապես

գրական նյութերի միջոցով ընթերցողը ստանում էր ոչ միայն գեղագիտական դաստիարակություն, այլև հաղորդակցվում էր ժամանակի եվրոպական ու ռուսական գրական ուղղություններին: XX դ. սկզբի հայ մամուլում այս իմաստով հատկապես ազդեցիկ եղավ «Մասիսի», «Բյուզանդիոնի», «Արևելքի», «Հանրագիտակի», «Արևելյան մամուլի», «Հայ գրականության» և այլ պարբերականների նշանակությունը: Հանդես եկան Մ. Մեծարենցը, Ռ. Զարդարյանը, Արտ. Հարությունյանը, Թլկատինցին, Չիֆթե-Սարաֆը, Դ. Վարուժանը, Ռ. Սևակը և ուրիշներ, որոնք խոր ակոսներ բացեցին հայ գեղարվեստական մտածողության մեջ:

1900-1908 թթ. «Արևելքում», «Արևելյան մամուլում», «Մանզումեի էֆքյարում», «Հանրագիտակում» և այլ պարբերականներում դարձյալ գրաքննական ճնշումների հետևանքով վերակենդանացավ բարոյախոսական հրապարակախոսության ժանրը, որ հայ մամուլը հաղթահարել էր դեռևս 1870-ական թթ.: Իրականության անդրադարձը, սակայն, նկատելի էր գավառին վերաբերող հրապարակումներում, որոնք լուսաբանում էին, ինչպես նկատեցինք, ժողովրդի միջավայրը, կյանքն ու կենցաղը՝ բնականաբար, շրջանցելով գրաքննության համար անհանդուրժելի իրավազրկությունն ու հարբստահարությունները մերկացնող հարցադրումները: Տարածված թեմա դարձավ իր հոգևոր պարտավորություններն անտեսող եկեղեցականների քննադատությունը, ի դեպ, մի երևույթ, որ նկատելի է նաև արևելահայ մամուլում: Այսուհանդերձ, 1900-1908 թթ. արևմտահայ մամուլը, որքան էլ տարուբերվեր վերացականի և որոշակիի, մանրաթեմայնության և ընթերցողին հուզող հիմնախնդիրների միջև, զգալիորեն մոտենում էր իրականությանը, ընդառաջում ժամանակի մտավոր պահանջներին: Լրագրության ասպարեզում փաստական նյութի մատուցման նոր ձևեր մշակեցին այնպիսի տաղանդավոր գործիչներ, որպիսիք էին Հ. Գազանճյանը, Ա. Անտոնյանը, Տ. Արփիարյանը, Հ. Մամուրյանը, Մ. Գոչունյանը, Օ. Չիֆթե-Սարաֆը, Հ. Ալփիարը, Արտ. Հարությունյանը, Բ. Քեչյանը, Ռ. Զարդարյանը և շատ ուրիշներ:

Մամուլի նախընթաց և խնդրո առարկա փուլերի ուշագրավ կողմն են ներկայացնում նաև կրոնական պարբերաթերթերն ու հանդեսները: 1900-1915 թթ. հրատարակվում էին Հայաստանյայց առաքելական եկեղեցու դավանանքը քարոզող «Լույսը» (1905-1907), «Տաճարը» (1909-1914), «Աստղ Բեթլեհեմի»-ն (1911-1912), «Տաճար մանկանցը» (1913-1915), ինչպես նաև բողոքականների «Ավետաբերն» ու կաթոլիկների «Կաթողիկե արձագանքը» (1911-1915) (բոլորն էլ հրատարակվել են Կ. Պոլսում) և այլ պարբերականներ: Դրանցում, ի տարբերություն նախորդ դարում հրատարակված կրոնական մամուլի, թուլանում է դավանական հակամարտությունը, շատ հրապարակումներ կրում են քրիստոնեական լայնախոհության և հանդուրժողականության կնիքը:

1908-1914 թթ., կապված Համիդյան վարչակարգի հեռացման հետ, մամուլն ապրեց ակտիվացում՝ նախորդ տարիների երկարատև ընդարմացումից հետո: Երկրում սահմանադրության թեկուզ և զուտ ձևական վերահաստատումը և երիտթուրքական կառավարողների շռայլ ու շողոմքոր խոստումները ընդհանրական հայրենիքի, Օսմանյան Թուրքիայում բոլոր ազգերի ազատության

ու իրավահավասարության մասին նախապես լավատեսություն էին ներշնչում մտավորականությանը: Մամուլն ապրում էր քիչ առաջ հրաժեշտ տված Համիդյան անցյալից բաժանվելու վայելքը: Թերթերի էջերում մեծ քանակ էին կազմում «զուլումի» տարիների վերապրումները, տպագրվում են հուշեր, անդրադարձներ, էսսեների բնույթի ակնարկներ՝ թարմ անցյալի դեպքերի իրապատում վերարտադրությամբ: Նկատելի է նաև անհատի անձնաքննության, ազգի վրիպումներին խորամուխ լինելու ձգտումը այն դեպքում, երբ երիտթուրքական կեղծ ժողովրդավարական հարայհրոցի մթնոլորտում կարծեք երկրորդական նշանակություն էր տրվում օրավուր ընդգծվող տնտեսական ու քաղաքական բռնություններին (Արևմտահայաստանում ազգային ու կրոնական ճնշումների ուժեղացում, օսմանյան խորհրդարանի ընտրություններում փոքրամասնությունների ընտրական իրավունքի կազմակերպված ոտնահարումներ և այլն): Հայ լրագրությանն այս թմրությունից դուրս բերեցին Ադանայի դեպքերը (1909): Նախապես լրագրողները դյուրությամբ կուլ տվեցին երիտթուրքական ապատեղեկատվության խայծը՝ հավատալով, թե, իբր, Կիլիկիայում սանձազերծված նախճիրը Համիդյան հին հետադիմական վարչակարգի գործն է: Ջարդի իրական կազմակերպիչների՝ նոր իշխանությունների դիմակը պետք է պատռվեր այն բանից հետո, երբ նրանք ճիշտ Համիդյան ոգով, սպանդի ամբողջ մեղքը սկսեցին բարդել հայերի վրա՝ նրանց մեղադրելով հեղափոխական կոմիտեներ ստեղծելու, անկախ թագավորության երազանքներ փայփայելու և Օսմանյան Թուրքիան անդամահատելու «դավաճանական ձգտումների» մեջ: Դրանից հետո սկսվեցին «Ժամանակի». «Արևելյան մամուլի», «Մանգումեի էֆքյարի», «Բյուզանդիոնի» և այլ թերթերի մերկացնող հրապարակումները, ականատեսների վկայությունների և անգամ դիվանագիտական զեկույցների տպագրությունը լրագրության էջերում, որով անվիճելիորեն բացահայտ էր դառնում, որ ջարդերը կազմակերպված և հրահանգավորված են եղել երիտթուրքական կուսակցական ու կառավարական կենտրոնների կողմից, և որ դրանց իր մասնակցությունն է բերել թուրքական կանոնավոր զորքը:

1910-1914 թթ. և հատկապես բարենորոգումների հարցի վերարծարծման տարիներին հայ մամուլն իր ուշադրությունը կենտրոնացնում է Արևմտահայաստանի աղետալի կացության վրա: Ժամանակի հայկական թերթերը՝ «Բյուզանդիոնը», «Դաշինքը», «Աշխատանքը», «Ժամանակը» և մյուսները մի քանի խորագրերի տակ և պարբերաբար ու բազմակողմանիորեն լուսաբանում էին Արևմտահայաստանի վիճակը, բացահայտում բռնությունների, թալանի ու սպանությունների դեպքերը, իշխանությունների խրախուսող կեցվածքը դրանց նկատմամբ: Առանց կասկածի պետք է ասել, որ այս տարիների մամուլն իր՝ փաստականորեն հագեցած հրապարակումներով և լրատվությամբ հայության մեջ նախապատրաստել կամ հասցրել էր ձևավորել հասարակական կարծիք սպասվելիք զանգվածային կոտորածների վերաբերյալ: Չեզոք, ուրեմն և օբյեկտիվ այս մամուլի լրատվական

ուղղվածությունը, սակայն, ի զորու չեղավ նպաստելու ազգային կուսակցությունների՝ ցեղասպանությանն ընդհուպ նախորդող իրադարձությունների առավել սթափ գնահատականին և մասնավորապես երիտթուրքերի քաղաքականության հանդեպ իրատեսական վերաբերմունքի մշակմանը: 1909-1915 թթ. մամուլը, այս ամենով հանդերձ, ձեռք էր բերել ազգային-քաղաքական այնպիսի բովանդակություն, որ կարելի է բնութագրել մի քանի կարևոր ուղղություններով: Ամենից առաջ ընդլայնվել էր նրա հասարակական նշանակությունը: Նախ, Արևմտահայաստանի և հայաբնակ այլ բնակավայրերի կյանքի և իրականության անդրադարձը, դրանց իրական կացության վերաբերյալ փաստական լուսաբանումները: Արժեքավոր էին հատկապես 1909-ից հետո Թուրքիայի քաղաքական կարգերի քննադատությունը, երիտթուրքական սահմանադրական ձևակերպումների և իրականության միջև հակասությունների վերհանումները՝ հատկապես Արևմտահայաստանի իրավազրկության ցուցադրումներով: Ըստ էության, այդ բացահայտումները ոչ այլ ինչ էին, եթե ոչ երիտթուրքական վարչակարգի քողարկված կամ բացահայտ քննադատություն: 1910-ական թթ. մամուլի լրատվական-վերլուծական նյութերի մեջ տևական թեմա է դառնում հայերի հողազրկման իրողությունը, քրդական աշիրեթների և թուրք հողատեր վերնախավի, ինչպես և գաղթական մահմեդական տարրերի կողմից հայերի հողերը բռնազավթելու փաստերի ցուցադրումը: Այնուհետև, մամուլում լուսաբանվում է հայ առևտրական խավերին բռնի կերպով ներքին շուկայից դուրս մղելու վերաբերյալ լրատվությունը: Այս իմաստով հատկանշական են մամուլի այն հրապարակումները, որոնք վերաբերում են 1912-1913 թթ. Բալկանյան պատերազմների ժամանակաշրջանում ներքին գործերի նախարար Թալեաթի՝ հույն առևտրականների դեմ կազմակերպած բոյկոտին: Բոյկոտը սահուն կերպով շրջվեց հայերի դեմ՝ նրանց խանութների վրա կազմակերպված հարձակումների, նրանց հետ առևտուր անելու արգելքի, նոր ապօրինի մաքսեր ու տուրքեր պարտադրելու և այլ ձևերով:

Հայ հասարակության տագնապն էին խորացնում թուրքական բանակ զորակոչված հայ զինվորականների համատարած հալածանքները ծառայական միջավայրում: Մամուլը բավականաչափ նյութեր է տպագրել՝ ցույց տալով զորանոցներում հայ զինվորների նկատմամբ գործադրված բռնությունները թուրք սպայության ու զինվորների կողմից, բանակում հայ զինվորությունը իբրև թշնամի տարր դիտելու երևույթների բացահայտումները, մի վերաբերմունք, որով նախապատրաստվում էր 1914-1915 թթ. հայերին աշխատանքային հատուկ գումարտակներում առանձնացնելու և զանգվածաբար բնաջնջելու ծրագիրը:

Մամուլում դրսևորվել է հայ հանրության խորին մտահոգությունը Արևմտահայաստանում բարեռորոգումների, դրա վերաբերյալ միջազգային քննարկումների ընթացքի համար: Լրատվամիջոցներում այս խնդրի բարեհաջող լուծման հեռանկարը ընկալվում է զուսպ, անգամ թերահավատորեն, որ, ի դեպ, խրախուսվում էր Գևորգ կաթողիկոսի և Կ. Պոլսի

Զավեն պատրիարքի կողմից: Հիրավի, ելնելով Եվրոպայում Պողոս Նուպարի կողմից բարենորոգումների գործը հաջողությամբ առաջ տանելու և այս հարցում թուրքերին չգրգռելու մտահոգությունից, կաթողիկոսի դիվանը 1914 թ. մայիսի 4-ին հատուկ գրություն էր ուղղել Զավեն պատրիարքին: Այստեղ նշվում է, որ թուրք պաշտոնյաները հետևում են հայերի գործողության եղանակներին ու ծրագրին, որ հաճախ դրսևորվում է ազգային թերթերում: Նախատեսվում է, ասված է գրության մեջ, որ օսմանյան կառավարությունը «իւր աւանդական քաղաքականութեան համաձայն կարող է չնախատեսուած արգելքներ յարուցանել եւ մինչեւ իսկ գաղտնի դժուարութիւններ ստեղծել հայերի ներգաղթի եւ ուժեղացման դէմ հայկական նահանգներում»: Ուստի և առաջարկվում է ապրիլի 28-ի հայրապետական կոնդակով (բարենորոգումների հարցի վերաբերյալ) «յանձնարարուած խնդիրների ու կարևոր հարցերի մասին խորհրդակցութեան արդիւնքներն ու հետեւանքները չտպագրուեն թերթերի մէջ, ինչպէս եւ նոյն հայրապետական կոնդակը պահել առանձին»[1]:

Այսուհանդերձ, 1913-ին և նույն 1914-ին արևմտահայ մամուլում բազմաթիվ հրապարակումներ հայտնվեցին, որոնցում արտահայտվում էին ակնկալիքները եվրոպական տերություններից, հատկապես Ռուսաստանից, Ֆրանսիայից ու Գերմանիայից: Ոչ կուսակցական, ինչպես և կուսակցական մամուլի մի մասը, հատկապես ռամկավար սահմանադրական, բարենորոգումների հարցի լուծումն առնչում էր Պողոս Նուպարի և նրա գլխավորած պատվիրակության հետ: Մամուլում ի հայտ եկան նաև քննադատական մոտեցումներ բարենորոգումների իրականացման ուղիների, դրանց հանդեպ թուրքական իշխանությունների երկդիմի դիրքորոշման, իսկ հետո բարենորոգումները ձախողելու մարտավարության նկատմամբ: Ակնհայտ է, այսպիսով, որ 1908-1914 թթ. արևմտահայ մամուլը կատարել է ոչ միայն լրատվական ու մշակութային, այլև ազգային-քաղաքական դեր իր գոյության ծանր ու հակասական մի ժամանակաշրջանում՝ ցեղասպանությանն անմիջապես նախորդող տարիներին:

Առաջին աշխարհամարտի մեջ Թուրքիայի մտնելը և հայերի ցեղասպանության սանձազերծումը, որ 1909-ից, Ադանայի դեպքերից ի վեր որոճում էին երիտթուրքերը, կործանիչ հարված հասցրեցին նաև Կ. Պոլսում, Զմյուռնիայում և Արևմտահայաստանի մի քանի կենտրոններում հրատարակվող հայ մամուլին: Ինչպիսին ժողովրդին վիճակված ճակատագիրն էր, նույնը պատահելու էր նրա մամուլին: Ցեղասպանության նախաքայլերը երիտթուրքերը սկսեցին նաև պոլսահայության մեջ: Մայրաքաղաքի հայությանը ջլատելու նպատակով նախ զանգվածորեն բանակ գորակոչեցին տղամարդկանց, որոնց ճակատագիրն արդեն նախորոշված էր: Պատերազմ հայտարարվելուց ի վեր Կ. Պոլսից հեռացել էին Համաձայնության երկրների դեսպանները[2], որ գործելու ազատություն ապահովեց երիտթուրքերին, իսկ Դարդանելի գործողության ձախողումը այլևս

---

[1] *ՀՀ ազգային արխիվ, ֆ. 57, ց, 5, թ. 11, 7-8:*

[2] **Զավէն արք.,** *Պատրիարքական յուշերս, վաւերագիրներ եւ վկայութիւններ, Գահիրե, 1947, էջ 84:*

անկասելի դարձրեց հայությանը բնաջնջելու նրանց խելացնոր ծրագիրը: 1915 թ. գարնանը Կ. Պոլսի հայությունն արդեն կտրված էր Արևմտահայաստանից: Փոստը չէր գործում, պատրիարքարանը և ժողովուրդը չգիտեին, թե ինչ արհավիրքներ են սպասվում գավառաբնակ հայերին: Այնուհետև, ապրիլի 24-ին Կ. Պոլսում ձերբակալվեցին հարյուրավոր հայ մտավորականներ, որոնց մի մասը տարվեց Չանղըր, մյուս մասը՝ Այաշ: Նրանցից քչերին հաջողվեց ազատվել մահվանից, իսկ մյուսները ոչնչացվեցին աքսորի ճանապարհին կամ հետո: Ապրիլի 26-ին Խառն ժողովի պատգամավորությունը, որի կազմի մեջ էր Գր. Զոհրապը, այցելեց մեծ վեզիր Սայիտ Հալիմ փաշային և իր խորին մտահոգությունն ու տագնապը հայտնեց կիրառվող բնաջնջման քաղաքականության առթիվ[3]: Փաստորեն, արևմտահայությունը հոչակվել էր օրենքից դուրս: Պրոֆ. Հ. Հակոբյանը 1915 թ. հոկտեմբերի 15-ին գրում էր իր մի նամակում. «Պոլիս մարդ չկայ, փողոցները հայ չեք տեսներ... Սղութիւն եւ չգոյութիւն ահաւոր են: Գաւառացիներու մեծ մասը Պոլսէն վտարուեցաւ»[4]: Խոսքը վերաբերում է Կ. Պոլսում բնակվող պանդուխտ հայերին, որոնց տարագրությունը սկսվել էր ավելի շուտ՝ 1915 թ. օգոստոսին[5]: Ամենայն հավանականությամբ, դրանից հետո հերթը պետք է հասներ բուն պոլսահայերին, ինչպես նկատում է ամերիկյան միսիոներ Ջեքսը[6]: Այս առթիվ Յո. Լեփսիուսը նկատում էր, որ Կ. Պոլսի դեսպանների լուրջ դիմումներից հետո երիտթուրքերը «հրաժարուեցին ընդհանուր տարագրութեան միջոցները տարածել նաև Պոլիսի եւ Իզմիրի հայ ազգաբնակչութիւնների վրայ: Սակայն լռելեայն շարունակեցին Պոլիսի հայերի տարագրութիւնը: Ընդամէնը տարագրուեց 10 հազար հոգի եւ ոչ մի տեղեկութիւն չկայ նրանց նոր բնակավայրերի մասին»[7]:

Պոլսահայերի մոտալուտ աքսորի նպատակադրումն էր պատճառը, որ Համաձայնության պետությունների կողմից հայերին բնաջնջելու առթիվ հայտնի հայտարարությունը հերքելու իր փորձերում երիտթուրքական Հավաս գործակալությունը նշանակալիորեն նվազեցնում էր պոլսահայերի թիվը՝ ավելի քան 200 հազարից այն իջեցնելով 77.836 մարդու[8]: 1916 թ. ապրիլին միայն երիտթուրքերը որոշեցին ձեռնթափ լինել Կ. Պոլսի և Զմյուռնիայի հայությանը աքսորելու և ոչնչացնելու մտադրությունից: Մնում էին, սակայն, հայերի ազգային կառույցները, որոնց փլուզման վրա ուղղվեց երիտթուրքական տակավին չհագեցած խորշակը: 1916 թ. հերթը հասավ պատրիարքարանին: Պատրիարքին ուղղված՝ հուլիսի 28-ի գրությամբ կառավարությունը հայտնում էր, որ «Թաքվիմ-ի վեքայի» պաշտոնաթերթի նույն օրվա համարում

---

[3] Նույն տեղում, էջ 98-100:

[4] **Մալէզեան Վ.,** Համբուս ծայրը, հ. Բ, Փարիզ, 1955, էջ 92:

[5] **Զավէն արք.,** նշվ. աշխ., էջ 148:

[6] Геноцид армян в Османской империи. Сб. документов и материалов под ред. Нерсисяна М. Г. Второе допол. изд., Е., 1983, с. 398.

[7] **Լեփսիուս Յո.,** Գաղտնի տեղեկագիր, հայ ժողովրդի ջարդերը, Ե., 2003, էջ 134:

[8] **Զավէն արք.,** նշվ. աշխ., էջ 108:

տպագրված «Հայոց կաթողիկոսության և պատրիարքության կանոնադրության» համաձայն, այդ նոր կրոնական մարմնին են միացվել Սսի և Աղթամարի կաթողիկոսությունները, ինչպես և Կ. Պոլսի ու Երուսաղեմի պատրիարքությունները: Կ. Պոլսի հայոց պատրիարքությունը և Ազգային սահմանադրությունը վերացվում էին, նոր կրոնական գլուխը՝ կաթողիկոս-պատրիարքը, ինչպես և հույների պատրիարքության համար էր սահմանված, գործելու էր երկու ժողովների գործակցությամբ՝ միայն կրոնական, դպրոցական և բարեգործական ոլորտում՝ անկախ լինելով էջմիածնի կաթողիկոսությունից[9]: Զավեն պատրիարքը աքսորվեց Բաղդադ, ապա Մոսուլ:

Երիտթուրքերը ծանր հարվածներ հասցրին նաև պոլսահայ մամուլին: 1910-ական թթ. մինչև պատերազմը Կ. Պոլսում տպագրվում էին յոթ առավոտյան թերթեր՝ «Ժամանակը», «Ազատամարտը», «Նոր աշխարհը», «Հայրենիքը», «Մանգումեի էֆքյարը», «Առավոտը», «Արևելքը» և երկու երեկոյան թերթեր՝ «Բյուզանդիոնն» ու «Բանբերը» (հետագայում՝ «Վերջին լուր»), ինչպես և մի կարճ ժամանակ հրատարակված «Լուսարձակ» օրաթերթը[10]: Պատերազմի տարիներին այս թերթերի մեծ մասը փակվեց գրաքննական ու վարչական կամայականությունների պատճառով: 1915-1918 թթ. «Պոլսահայ թերթերէն ապրեցան «Բիւզանդիոնը», «Ժամանակը», «Վերջին լուրը» և «Ճերիտեի շարգիյե»-ն[11]:

Թուրքական իշխանությունները փորձեցին ստեղծել նաև իրենց ձեռնասուն մամուլը՝ ի դեմս խմբագիրներ Ա. Մկրտչյանի և Հր. Հովասափյանի, որոնք Զ. Կյոզյուրյանից խլեցին «Տաճար» կրոնաթերթը՝ այն վերածելով «անկրօն օրկանի մը»: Սրանց կամ սրանց նման ազգուրացների ձեռքով զինադադարից ոչ շատ առաջ հրատարակվեցին «Հայրենիք» թերթը և էլ ավելի կարճ ժամանակ՝ «Մօտա» հանդեսը (1918), որը «մեռաւ իրեն ծնունդ տուող խմբագրին հետ»,- գրում է Թեոդիկը[12]:

Երիտթուրքերն ամենից առաջ հարձակումներն ուղղեցին կուսակցական և երգիծական հրատարակությունների դեմ: Դաշնակցության պաշտոնաթերթ «Ճակատամարտը» («Ազատամարտի» շարունակությունը») դադարեցվեց 1915 թ. ապրիլի 7-ին (վերահրատարակվել է 1918 թ. նոյեմբերի 20-ին՝ «Արդարամարտ» անվամբ): Դադարեցվեցին վերակազմյալ հնչակյան «Առավոտ» թերթը և երգիծական բոլոր հրատարակությունները, այդ թվում և Ե. Թոլայանի «Կավռօշը»: Հրատարակվող մի քանի թերթերը ենթարկվեցին խստագույն գրաքննության, որ իշխանությունները կիրառում էին պատերազմից անմիջապես առաջ և որ հասկանալի է դառնում առհասարակ նրանց հակահայ կեցվածքի համատեքստում: «Կառավարութեան տեսակետին անհաշտ արտայայտութիւն մը, շփոթ լուր մը կամ իրողութեան մը սխալ

---

[9] Նույն տեղում, էջ 192-194:

[10] **Ազատեան Թ.,** *Ժամանակ քառասնամեայ յիշատակարան, 1908-1948, Կ. Պոլիս, 1948, էջ 156-157:*

[11] **Թեոդիկ,** *Ամենուն տարեցոյցը 1916-1920, Կ. Պոլիս, 1920, էջ 271:*

[12] *Նույն տեղում, էջ 272:*

արձագանգը յաճախ տեղի կուտային այս կամ այն թերթին առժամանակեայ դադարման»,- գրում է Թ. Ազատյանը[13]: Պատերազմից առաջ «Ժամանակ» թերթն այս կերպ խափանվել է չորս անգամ՝ զինվորական գրաքննության կողմից[14]: Ի դեպ, 1911 թ. հունիսի 11-ին «Ժամանակը» փակվել էր այն պատճառով, որ տպագրել էր վարչապետ Մահմուդ Շեվքեթին սպանողների լուսանկարները՝ կախված վիճակում: «Ժամանակը» հարկադրված էր վերանվանվել «Հեռաձայնի», որից հետո խմբագիր Ս. Գոչունյանը վճարում է երաշխավորական գումարը՝ 500 ոսկի, և թերթը լույս է տեսնում նախկին՝ «Ժամանակ» անունով (1913 թ. փետրվարի 6- 28-ը՝ «Հեռաձայն»)[15]: Ուշագրավ է, որ «Ժամանակի» վերոհիշյալ զանցանքը կրկնած «Մանզումեի էֆքյարը» ևս դադարեցվել էր իշխանությունների կողմից, սակայն նրա հրատարակիչները չէին կարողացել հայթայթել վերահրատարակության համար անհրաժեշտ գումարը, և այդ թերթը դադարել էր ընդմիշտ[16]: Ավելացնենք, որ 1915-1918 թթ. Կ. Պոլսում օսմանյան գրաքննիչների հետ միասին գրաքննական գործառույթ էին իրականացնում նաև գերմանական ռազմական պաշտոնյաները, որի հետևանքով այս տարիների հայ մամուլն ընկավ երկակի՝ «թուրք և գերման գրաքննութեան մագիլներուն տակ»[17]:

Այս տարիների արևմտահայ մամուլը չէր կարող ազգային զգացումներ արծարծող որևէ բովանդակություն կամ առհասարակ ընթերցողին հետաքրքրող լուրջ բովանդակություն ունենալ: Թերթերի ծավալն արդեն վկայում է դրա չգոյության մասին: Այդ ակնհայտորեն երևում է մի քանի թերթերի հետ գոյատևած «Ժամանակի» կրած ծավալային փոփոխություններում: 1914 թ. սեպտեմբերի 2 թվից սկսած՝ այս թերթը լույս է տեսել երկու էջով, որոնք լցվում էին Ե. Օտյանի երգիծական «տոմսակներով» և, անշուշտ, գրաքննության պարտադրած քաղաքական լուրերով: 1915 թ. հունվարին «Ժամանակը» վերականգնում է չորս էջի նախկին ծավալը, չքանում են Ե. Օտյանի «տոմսակները», ինչպես և Ե. Օտյանի ու Մ. Կյուրճյանի «Թաղականին կնիկը» երգիծավեպը: 1916 թ. փետրվարի 21-ից «Ժամանակը» վերստին ամփոփվում է երկու էջի սահմաններում[18] հավանաբար, քառէջ ծավալին վերադառնալով զինադադարից հետո, 1918 թ. աշնանը: Մամուլին փոխարինելու էր եկել երիտթուրքերի մերկապարանոց, ընթերցողին թելադրվող քարոզչությունը՝ թերթերի հավելվածների ձևերով: Պատերազմի չորս տարիների ընթացքում, գրում է Թեոդիկը, «փողոցը ցրուիչ տղոց ձեռքն էին թաց-թաց թերթեր եւ իլավէներ (հավելվածներ – Խ. Ա.)՝ առանց առաջնորդող յոդուածի, առանց գրականութեան և առանց խորհողութեան, անգոյն եւ անդրօշմ թուղթի կտորուանք, որոնք օրագիր ըլլալէ զատ ամեն բան

[13] **Ազատեան Թ.,** *նշվ. աշխ., էջ 141:*
[14] *Նույն տեղում, էջ 141, 153-154, 157:*
[15] *Նույն տեղում, էջ 153:*
[16] *Նույն տեղում, էջ 157:*
[17] **Թեոդիկ,** *նշվ. աշխ., էջ 271:*
[18] **Ազատեան Թ.,** *նշվ. աշխ., էջ 175-178:*

էին»[19]: Թերթերը հատկապես լռություն էին պահպանում ամեն մի այնպիսի լուրերի վերաբերյալ, ինչպիսիք էին Օսմանյան Թուրքիայի ու նրա դաշնակիցների պարտությունները ռազմաճակատներում, հայ պանդուխտների ու մտավորականների տեղահանություններն ու աքսորը Կ. Պոլսից, տեղեկատվությունը ամեն մի դեպքի կամ ադետի մասին: 1914-1918 թթ. գոյատևած «Վերջին լուր» թերթի աշխատակից Հ. Արամյանը գրում է, որ պատերազմի առաջին օրերից «խիստ գրաքննութիւն հաստատուեցաւ», և որ ողջ հայ մամուլն այս օրերին «շատ վերապահ, զգոյշ և խոհեմ էր»: Նրա թարգմանությամբ 1914 թ. աշնանը «Վերջին լուրը» գերմանական սոցիալ-դեմոկրատական «Ֆորվերթս» թերթից տպագրեց հակապատերազմական մի հոդված: Հետևանքն իրեն սպասեցնել չտվեց: Երիտթուրքական մամուլի դիվանը չբավարարվեց թերթը փակելու սպառնալիքով: Պաշտոնազրկվեցին թերթի երկու հայ գրաքննիչները, իսկ ոստիկանությունն ընկավ իր՝ Հ. Արամյանի հետևից. «Տիգրան Զաւէն» (ճանաչված լրագրող-հրապարակախոս, խմբագրել է Կ. Պոլսի «Երկրի ձայնը», «Երկիր», «Ժողովուրդ» և այլ թերթեր – Խ. Ա.) զիս փրկեց, քիչ մնաց ոտքի տակ պիտի երթայի: Քանզի երկու ոստիկան զիս կը փնտռէին»,- գրում է Հ. Արամյանը[20]:

Փոխարենը, թուրքական լրատվամիջոցները լեփ-լեցուն էին էժանագին և անհարիր հարձակումներով ընդդեմ Թուրքիայի արտաքին և ներքին թշնամիների, սպառնալիքներով ու վրեժխնդրության կոչերով՝ ընդդեմ հայերի: Երիտթուրքական «Թասվիր-ի էֆքյար» թերթը հայհոյական բառախաղերով տեղեկացնում էր. «Մեր կառավարությունը ճամբու կը դնէ հայ վալիները» Հոֆին և Վեստենենկին, առաջինին կոչելով «Էոֆ», իսկ երկրորդին՝ «Փեզեվենկ» (զզվանքի և հայհոյական հորջորջումներ)[21]:

Հայ մամուլն իր այս կիսամեռ վիճակը պահպանեց մինչև զինադադարը (1918 թ. հոկտեմբերի 30), որից հետո Կ. Պոլսում կտրուկ փոխվեց քաղաքական մթնոլորտը: Ոչ մահմեդական համայնքները, այդ թվում և հայերը շտապեցին վերստեղծել իրենց ազգային կառույցները՝ դաշնակիցների հովանու ներքո: Կազմվեց Ազգային խորհրդակցական ժողով, որի մեջ մտան նաև հարանվանությունների ներկայացուցիչները[22]: Վերահաստատվեց ազգային սահմանադրությունը: 1919 թ. փետրվարի 19-ին աքսորից վերադարձավ Զավեն պատրիարքը[23]: Ընտրվեց ազգային երեսփոխանական ժողով, 1919 թ. մարտին սկսեցին գործել վարչական և կրոնական ժողովները: Ազգային մարմինների առջև ծառացել էին Հայ դատի, տարագիրների ու որբերի հետ կապված առաջնահերթ խնդիրները, որոնք բազմաթիվ թելերով աղերսվում էին Կ. Պոլսի հայության ջախջախված ազգային-հասարակական կյանքի բարդ ու հակասական պայմանների հետ: Այս իրադրության մեջ աստիճանաբար պետք

[19] **Թեոդիկ,** *նշվ. աշխ., էջ 271:*
[20] **Արամեան Հ.,** *Մեծ եղեռնի պատգամ հայոց Տանթէական, Պեյրութ, 1970, էջ 60, 62:*
[21] *Նույն տեղում, էջ 65:*
[22] **Սիրունի Ց.,** *Ինքնակենսագրական նօթեր, Ե., 2006, էջ 207:*
[23] **Թէոդիկ,** *Ամենուն տարեցոյցը, Կ. Պոլիս, 1921, էջ 156:*

է աշխուժանային հանրային կազմակերպությունները և հիմնարկները: Ազգային կյանքի այս վերընձյուղումը մի հայտնի չափով պետք է նկատելի դառնար գրատպության և մամուլի ասպարեզում ևս:

1918-1922 թթ. Կ. Պոլսում գործում էին ավելի քան երկու տասնյակ հայկական տպարաններ, որոնք տպագրում էին գրքեր և պարբերական հրատարակություններ, գովազդ, հայտարարություններ, առևտրական ծանուցումներ և այլն: Հայտնի էին Ասատուրյան և որդիք, Արզուման Օննիկի, Ա. Կարոյանի, Պ. Պալրգճյանի, Մ. Սանճագճյանի, Մ. Հովակիմյանի, Վ. Տեր-Ներսեսյանի և այլոց տպարանները[24]: Լրատվության նշանակությունը, սակայն, առավել կարևոր էր թվում հանրության աչքին, և այդ հասկանալի է դառնում, եթե նկատի առնենք, որ պատերազմի տարիներին հայ մամուլը գրեթե ոչնչացվել էր: Մամուլի կուտակած ասելիքը պետք է պոռթկար պատերազմի ավարտից հետո: Կ. Պոլսում 1919-1920 թթ. վերահրատարակվեցին «Ոստան» (հիմն. 1911 թ.), «Վերջին լուր» (հիմն. 1914 թ.), «Կավռոշ» (հիմն. 1908 թ.), «Շավիղ» (վերահրատ. 1919 թ.), «Ատրուշան» (հիմն. 1910 թ.), «Նավասարդ» (հիմն. 1913 թ.) և այլ պարբերականներ: Նույն ժամանակներում վերահրատարակվեցին ՀՅԴ «Ճակատամարտ» (հիմն. 1908 թ. «Ազատամարտ» անվամբ), վերակազմյալ հնչակյանների «Առավոտ» (հիմն. 1909 թ.) թերթերը: 1918-ին ասպարեզ եկան նոր թերթեր, հիմնականում շաբաթաթերթեր և ամսաթերթեր՝ «Երևանը», «Խելոք Դավիթը», «Հայրենիքը», 1919 թ.՝ «Հայ կինը», «Հայ բուժակը», «Հայ սկաուտը», «Իգնատ աղան», «Հայ միտքը», «Նոր դարը», «Շավիղը» և այլ պարբերականներ: Զմյուռնիայում «Արևելյան մամուլ» թերթի կողքին 1919-ից սկսեցին հրատարակվել «Ատրուշան», «Դափնի», «Իրավունք», «Հորիզոն» և «Միմոս» պարբերականները: 1920 թ. նոր պարբերականների քանակը նվազում է. Կ. Պոլսում լույս են տեսնում ընդամենը մեկ տասնյակի չափ նոր հրատարակություններ, Զմյուռնիայում՝ երեքը: 1921-1922 թթ. Կ. Պոլսում նախորդ քանակն ավելի է նվազում՝ չհասնելով մեկ տասնյակի:

1918-1922 թթ. Կ. Պոլսի և Զմյուռնիայի հայ մամուլն աչքի է ընկնում իր համազգային մտահոգություններով և հայության, նրա քաղաքական ու տնտեսական առկա դրության և դրանց զարգացումների լայնախոհ ընդգրկումներով: Պարբերականներն իրենց ուշադրության կենտրոնում են պահում այս գաղթօջախները լցված հայ բազմահազար փախստականների, որբերի, նրանց ապաստանի ու խնամքի և ուսուցման ամենատարբեր խնդիրները՝ չմոռանալով նաև տեղական ազգային կառույցների ու հաստատությունների հանրօգուտ գործունեության հետ կապվող իրողությունները: Անկախ պարբերականները աշխուժորեն քննարկում էին Փարիզի խաղաղության կոնֆերանսում (1919 հուվար-1920 հունվար) Հայաստանի պատվիրակությունների գործունեության, Հայաստանի սահմանների ճանաչման, ապա Սևրի պայմանագրի վավերացման ու իրականացման

---

[24] **Թէոդիկ,** *նշվ. աշխ., Կ. Պոլիս, 1922, էջ 412:*

հարցերը: Մամուլում զգալի է նաև հիասթափությունը Արևմուտքի՝ Թուրքիայի նկատմամբ վարած քաղաքականությունից, սրանց միջև խորացող հակասություններից և, ի վերջո, շահընկալ մոտեցումներից: Անկախ մամուլը վերոհիշյալ ակնկալիքների մեկնակետից էր գնահատում նախ Հայաստանի Առաջին հանրապետության, ապա և Խորհրդային Հայաստանի գոյությունը՝ մտահոգություն ունենալով, որ և մեկը, և մյուսը կարող են խանգարել համազգային խնդիրների լուծմանը, հիմքեր տալով Արևմտահայաստանի սահմաններում պետություն ունենալու վերաբերյալ արևմտյան տերությունների հնարավոր առարկություններին՝ այն իմաստով, որ հայերն արդեն պետություն ունեն: Անկախ դրանից, մամուլը ըստ հնարավորին հետևում էր Արևելյան Հայաստանի հայ բնակչության, այդ թվում և գաղթականության նյութական ու մշակութային կյանքին, նպաստում նրանց դժվարին առօրյայի թեթևացմանը:

Լոզանի կոնֆերանսը (1922 թ. նոյեմբեր-1923 թ. հուլիս) վերջ էր դնելու պոլսահայ մամուլի ազգային բաղձանքներին, և պատահական չէ, որ նույն՝ 1923 թ. գաղթօջախում ոչ մի նոր հայերեն թերթ չի հրատարակվել:

Կարելի է կարծել, որ Կ. Պոլսում հայ մամուլի զարգացումն արգելակող գործոններից էր նաև քեմալականների որդեգրած անհանդուրժող քաղաքականությունը ազգային փոքրամասնությունների, այդ թվում և հայերի հանդեպ: Այնուհետև, և թերևս ամենից առաջ, Կ. Պոլսի հայ գաղթօջախը զրկվել էր իր ազգային-հոգևոր սնուցիչ հողից, որով և անհրաժեշտորեն ու ավանդականորեն հանդես էր եկել իբրև հայության արևմտահայ հատվածի հոգևոր, մտավոր ու մշակութային կենտրոն, զրկվել էր իր կենսունակության հիմքից՝ Արևմտահայաստանից ու դրա հայ բնակչությունից: Այսուհետև գաղթօջախը շարունակելու էր իր գոյությունը որպես զուտ ստամբուլյան, ինքնաբավ մի հանրություն, որի անցյալում էին մնացել երբեմնի փառքն ու այն եզերող ճակատագրական կորուստները: Ինչպիսին իրերի դրությունն էր, այնպիսին էլ հանդես էր գալիս այս կացությունն արտացոլող պոլսահայ մամուլի զուսպ ու ժլատ, բայց և պերճախոս վիճակագրական պատկերը:

ЗАПАДНОАРМЯНСКАЯ ПЕРИОДИКА В ПЕРВОЙ ЧЕТВЕРТИ XX В.

ХАРАТЯН А. А.

Резюме

Историю западноармянской периодики 1900-1923 гг. можно разделить на три этапа:

1. с начала века до Первой мировой войны (1900-1914);
2. годы Первой мировой войны и геноцида армян (1915-1918);
3. начиная с послевоенного периода и до образования Турецкой республики (1918-1923).

В указанный период западноармянская периодика претерпела значительные изменения как в содержательном, так и идеологическом аспектах, что было обусловлено политическими событиями в Османской Турции, в частности, геноцидом армян, организованным правительством младотурок, а также ролью и значением Армянского вопроса в международных отношениях вплоть до Лозаннской конференции (1922-1923).

THE PRESS OF WESTERN ARMENIA
IN THE FIRST QUARTER OF THE 20TH CENTURY

A.KHARATYAN

Abstract

The history of the press of Western Armenia may be divided into three periods:

1. From the beginning of the 20th century to World War I (1900-1914).
2. The period of WWI and the Armenian Genocide (1915-1918).
3. From the end of WWI until the beginning of the Republic of Turkey (1918-1923).

During all these periods the Western Armenian press acted in the informational and ideological way connected with political events taking place in Ottoman Turkey, the genocidal policy of the Young Turk government perpetrated against Armenians and the importance of the Armenian Question, and the Lausanne Conference (1922-1923).